Հավասին մասնակցել է մի շարք գուսանական մրցույթների՝ արժանանալով մրցանակների: Իր երկերի կատարումով հանդես է եկել ԽՍՀՄ մի շարք երկրներում: Կյանքի օրոք հրատարակվել է գուսանի ստեղծագործության փոքրագույն մասը՝ «Բուրմունք» (1950 թ.), «Երգեր» (1958 թ.), «Իմ քնարը» (նոտագրված, 1961 թ.), «Քառյակներ» (1966 թ.), «Հասմիկ» (1975 թ.):

1967-ից դարձել է Հայաստանի գրողների և կոմպոզիտորների միությունների անդամ: 1967 թ. արժանացել է ՀԽՍՀ ժողովրդական արտիստի կոչման: Մահացել է Երևանում 1978 թ. փետրվարի 24-ին:

Հավասին գրել է մոտ 3600 աշուղական բանաստեղծություն, մոտ 2000 քառյակ, շուրջ 150 երգ, երգասացությամբ հեքիաթներ: Իր ստեղծագործություններում անդրադարձել է սիրային-քնարական, բարոյախրատական, վիպական և հայրենասիրական թեմաներին:

Նրա ժառանգության մեջ առանձնակի տեղ են գրավում սիրային բանաստեղծությունները: Հետագա տարիներին, արդեն լայն ճանաչում գտած գուսանը, իր երգացանկը հարստացնում է հայրենասիրական թեմաներով՝ Հայրենիքի հանդեպ տածած սերը. «Կուզեմ անդադար, թողած սեր ու յար, երգել քեզ համար, Հայրենիք», («Հայրենիք»): Նույն շնչով են գրված «Հայաստանի սիրուն սարեր», «Երիտասարդ Հայաստան», «Շինարար կյանք», «Սովետական կես դարը» և այլ երգեր: Գուսանը շատ երգեր ունի նվիրված բանակին, Հայրենական պատերազմին, իր սիրելի Ջավախքին և այլն: Նրան են պատկանում նաև «Հյուսիսային արև», «Դավաճան Արփիկը», «Աշխենը Սուրիկը» և այլ հեքիաթները:

Կիրառել է աշուղական դասական տաղաչափության ավելի քան 40 ձև, տարբերակել դրանք, օգտագործել նաև հայ ժողովրդական բանաստեղծության չափեր ու ձևեր: Աշուղի եղանակները ելևէջային հատկանիշներով բխում են գյուղական երգից, ցայտուն ազգային են: Մեղեդիական հնարամտությունը, հուզական ջերմությունը, ռիթմի և կառուցվածքների թարմությունը և ընդհանուր արտահայտչականությունը բնորոշ են նրա լավագույն երգերի եղանակներին՝ «Կոլխոզի չոբան», «Ինչ ասեմ յարիս», «Ջուր կերթաս», «Եղնիկի պես», «Ինչո՞ւ սիրեցիր» և այլն: Դրանցից մի քանիսը կոմպոզիտորները մշակել են ձայնի և դաշնամուրի, երգչախմբի, վոկալ կվարտետի և ժողովրդական երգի ու պարի անսամբլի համար:

Այսօր նույնպես Գուսան Հավասին հայ ժողովրդի սրտում է, իր արվեստը շարունակում է մնալ ազգային կարևոր արժեք, հիշում են նրան նաև իր ծննդավայրում՝ Ջավախքում: Իսկ 2010-ին Ախալքալաքում կանգնեցվել է նրա հուշարձանը: Այս տարվա հոբելյանի հետ կապված դեկտեմբերին ՀայՓոստը շրջանառության մեջ է դրել մեկ նամականիշ՝ նվիրված «Մեծանուն հայեր. Գուսան Հավասու (Արմենակ Մարկոսյան) ծննդյան 125-ամյակը» թեմային:

Նամականիշի վրա պատկերված է Հավասին՝ գործիքը ձեռքին, հայկական զարդաքանդակի խորապատկերով: Նամականիշի ներքևի աջ անկյունում պատկերված է «Գուսան Հավասի, 125 ԱՄՅԱԿ» գրառումը՝ հայերեն և անգլերեն լեզուներով:

Թողարկման օրը՝ 14 դեկտեմբերի 2021 թ.
Դիզայնը՝ Ռեմ Սահակյանի
Տպարանը՝ Cartor, Ֆրանսիա
Չափսերը՝ 45,0 x 33,0 մմ
Մեկ թերթի վրա՝ 10 հ.
Տպաքանակը՝ 25 000 հ.

http://javakhkmedia.com/?p=3817
https://www.haypost.am/am/Philatelia/Stamps-by-years/2021
https://avproduction.am/?ln=am&page=person&id=176&name=%D4%B3%D5%B8%
http://www.jamanak.com/content/%D5%A8%D5%B6%D5%AF%D5%A5%D6%80%

*Նյութը պատրաստեց՝*
**ՄԱՐԳԱՐԻՏԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԸ**

## «ԵՊԿ-100» ուսանողական մրցույթ

Փետրվարի 18-ին Ակուստիկ լաբորատորիայում տեղի ունեցավ «ԵՊԿ-100» ուսանողական մրցույթի ամփոփման և մրցանակների հանձնման պաշտոնական արարողությունը: Մրցույթը նախաձեռնել էր Կատարողական արվեստի պատմության և տեսության ամբիոնի Միջառարկայական Մասնագիտացման Կենտրոնը: Ուսանողները՝ թվով 8 մասնակից, ծոնեցին հարազատ բուհին արվեստի ամենատարբեր ժանրերի իրենց հեղինակային ստեղծագործությունները՝ բանաստեղծություններ, տեսաֆիլմ, ինստալյացիա, դաշնամուրային դուետ, ֆոտոշար, կոլաժ: Հանձնաժողովի անդամները՝ ռեկտոր Սոնա Հովհաննիսյանը, պրոռեկտորներ Արամ Հովհաննիսյանը, Ծովինար Մովսիսյանը, Արմեն Բաղդասարյանը, Դաշնամուրային բաժնի դեկան Իրինա Հակոբյանը, ԿԱՊՏ ամբիոնի դասախոսներ Արամ Ավետյանը, Քրիստինե Շերոյանը, Լիլիթ Եփրեմյանը (ամբիոնի վարիչ, հանձնաժողովի նախագահ) քննության առան 7 հայտ (մեկ մասնակիցը ներկայացավ մրցույթից դուրս)՝ ըստ գնահատման հետևյալ բաղադրիչների. Գեղարվեստական գաղափար, Կատարման վարպետություն, Գեղարվեստական արդյունք: Շնորհվեց 4 մրցանակ և տրվեց 4 մասնակցության վկայագիր:



*Շուշան Այվազյան*



*Զոյա Սարգսյան*



*Կարեն Սարջանյան*



*Գարեգին Գրիգորյան*

Ակադեմիական երգեցողության ամբիոնի բակալավրականի 1-ին կուրսի ուսանող ***Շուշան Այվազյանը*** արժանացել է Առաջին մրցանակի (50 000 դրամ)՝ տեսաֆիլմի համար:

Ակադեմիական երգեցողության ամբիոնի մագիստրոսականի 1-ին կուրսի ուսանող ***Զոյա Սարգսյանը***՝ Երկրորդ մրցանակի (40 000 դրամ)՝ ինստալյացիայի համար:

Կոմպոզիցիայի ամբիոնի բակալավրականի 2-րդ կուրսի ուսանող ***Կարեն Սարջանյանը***՝ Երրորդ մրցանակ և (30 000 դրամ)՝ «Տոնական» 2 դաշնամուրի համար՝ ստեղծագործության համար:

Լարային բաժնի բակալավրականի 4-րդ կուրսի ուսանող ***Գարեգին Գրիգորյանը***՝ Չորրորդ մրցանակ, (20 000 դրամ)՝ ֆոտոշարի համար:

Մրցույթի ֆինանսավորումը՝ ռեկտորատի որոշմամբ, կատարվել է Երևանի Պետական Կոնսերվատորիայի բյուջեի հաշվին, որի համար Միջառարկայական Մասնագիտացման Կենտրոնը շնորհակալություն է հայտնում բուհի ղեկավարությանը:

Մասնակցության դիպլոմի արժանացած ուսանողները՝ ***Սոնա Թուրաբյանը, Հեղինե Խաչատրյանը, Լիլիթ Ղուշունցը, Նարեկ Խաչատրյանը*** ԿԱՊՏ ամբիոնի կողմից ստացան նվերներ՝ գրքեր և գրենական պիտույքներ:

## *Երաժիշտները կատակում են*

Այս տարի փետրվարի 29-ին լրանում է իտալացի կոմպոզիտոր Ջոակինո Ռոսսինիի ծննդյան 230-ամյակը: Կոմպոզիտորի երաժշտական ժառանգության հիմքն է կազմում օպերային արվեստը: Նա գրել է 38 օպերա՝ սերիա և բուֆֆա ժանրերում:

Հարկ է նշել, որ XIX դարի սկզբին իտալական օպերային թատրոնը երկարատև ճգնաժամի մեջ էր: Օպերա-սերիան գտնվում է հնացած շաբլոնների ճիրաններում: Հանդիսատեսն առաջին հերթին ուշադրություն էր դարձնում մեներգիչների վիրտուոզությանը կատարողական տեխնիկայի վարպետությանը: Ուստի կոմպոզիտորն ստիպված էր գոհացնել մեներգիչներին: Օպերա-բուֆֆան համեմատաբար ավելի կենսունակ էր, սակայն նրանում նկատելի էր հակումը դեպի անմիտ զվարճությունը: Ռոսսինին հանդիսացավ իտալական օպերայի բարենորոգիչը: Նա կարողացավ ընդհանրացնել, ի մի բերել նախորդ XVIII դարի օպերային արվեստի նվաճումները, այսպիսով նպաստելով ժանրի հետագա զարգացմանը: Շնորհիվ Ռոսսինիի իտալական օպերան կրկին հասավ նախկին փառքին:

Ռոսսինիի արվեստը մեծ ազդեցություն ունեցավ ոչ միայն իտալական (Վ. Բելլինի, Գ. Դոնիցետտի, Ջ. Վերդի), այլև XIX դարի եվրոպական օպերային արվեստի հետագա զարգացմանը:

Կոմպոզիտորի գլուխգործոցներն են «Սևիլյան սափրիչ» և «Վիլհելմ Տելլ» օպերաները: Առաջինն ամբողջացնում է օպերա-բուֆֆայի նախորդ զարգացումը, իսկ երկրորդը՝ XIX դարի հերոսական-ռոմանտիկական օպերայի հիմքն է հանդիսանում:

***

*Մի երիտասարդ կոմպոզիտոր հրավիրել էր Ռոսսինիին իր օպերայի պրեմիերայի: Մաեստրոն ընդունեց հրավերը: Ներկայացման ժամանակ ըստ իտալական ավանդույթի Ռոսսինին գլխարկը գլխին թողեց: Սակայն յուրաքանչյուր արիայից հետո նա հանում էր գլխարկը: Երբ իր կողքին նստած հեղինակը հարցրեց, թե նա ինչ է անում՝ Ռոսսինին պատասխանեց.*

*- Ողջունում եմ ձեր երաժշտության մեջ հանդիպած կոլեգաներին:*

***

*Ռոսսինին սիրում էր զանազան համեղ ուտեստներ պատրաստել և իր ամենամոտ բարեկամներին հյուրասիրել:*

*Մի անգամ, երբ հյուրերից մեկը գովում է նրա «Սևիլյան սափրիչ» օպերան, կոմպոզիտորը զբաղված լինելով կարկանդակ պատրաստելով, բացականչել էր.*

*- Ի՞նչ «Սևիլյան սափրիչ», դու փորձիր այս կարկանդակը, նոր կիմանաս, թե ես ինչ կոմպոզիտոր եմ:*

***

*Ապրելով Բոլոնիայում՝ Ռոսսինին մի հեղափոխական երգ է գրում, որն ոգևորում էր իտալացիներին ավստրիական լծից ազատագրվելու պայքարում:*

*Երիտասարդ կոմպոզիտորն զգում է, որ ավստրիական զորքերով լցված քաղաքում իր մնալն վտանգավոր է: Բայց Բոլոնիայից ոչ ոք չէր կարող մեկնել առանց գեներալի թույլտվության: Այնուամենայնիվ, կոմպոզիտորը որոշում է գնալ գեներալի մոտ և անցագիր ստանալ:*

*- Ո՞վ եք Դուք, - հարցնում է ավստրիական գեներալը:*

*Ռոսսինին տալիս է բերանն եկած առաջին պատահական ազգանունն ու ավելացնում.*

*- Ես երաժիշտ եմ, կոմպոզիտոր, բայց միայն ոչ այնպիսին, ինչպիսին է հեղափոխական երգեր գրող ավազակ Ռոսսինին: Ես սիրում եմ Ավստրիան և Ձեզ նվագախմբի համար գրել եմ ռազմական մի աշխույժ «Քայլերգ»:*

*Եվ գեներալին է հանձնում «Քայլերգ»-ի նոտաներն ու փոխարենն անցագիր ստանում:*

*Հաջորդ օրը զինվորական նվագախումբն արդեն կատարում էր «Քայլերգ»-ը Բոլոնիայի հրապարակում: Ի զարմանս ավստրիական գեներալի, իտալացիները լսելով այն ոգևորությամբ սկսում են երգել: Ի վերջո պարզվում է, որ դա Ռոսսինիի հեղափոխական երգի երաժշտությունն է:*

*Դժվար է պատկերացնել ավստրիացի գեներալի զայրույթն ու ափսոսանքը, որ խորամանկ կոմպոզիտորն արդեն հեռու էր Բոլոնիայի սահմաններից:*

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՃԱՊՈՆԻԱՅԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ 30-ԱՄՅԱԿԸ*

1

2022 թվականի փետրվարի 25-ին Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի 4-րդ հարկի դահլիճում կայացավ համերգ՝ նվիրված Հայաստանի և Ճապոնիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակին՝ դաշնակահարներ Յ. Ս. Բախի անվան միջազգային մրցույթի ոսկե մեդալակիր, ՀՀ վաստակավոր արտիստ, ԵՊԿ պրոֆեսոր Անահիտ Ներսեսյանի և միջազգային մրցույթների դափնեկիր Մարինա Գևորգյանի մասնակցությամբ: Համերգն անցավ հյուրերով լի դահլիճում և ջերմ մթնոլորտում:

Միջոցառմանը ներկա էին նաև հարգարժան հյուրեր և դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ: Ճապոնիայի Արտակարգ և լիազոր դեսպան Նորին Գերազանցություն պարոն Ֆուկուսիմա Մասանորին, ով իր ողջույնի խոսքն ուղղեց հանդիսատեսին և բոլորիս հիացրեց հայերեն լեզվի իմացությամբ: Պարոն Ֆուկուսիման խոսքերով այնքան ոգեշնչված էր, լսելով հարազատ մեղեդիներն, որ, համարյա թե համերգի ողջ ընթացքում կատարողների հետ համատեղ երգում էր:

ՀՀ Արտաքին Գործերի Նախարարի տեղակալ, հարգարժան պարոն Մնացական Սաֆարյանը, ով՝ չնայած իր աշխատանքային ծանրաբեռնվածությանը, հաճույքով ներկա գտնվեց համերգին: Հայաստանում Ճապոնիայի դեսպանատան երկրորդ քարտուղարը, հայ մշակութային իրադարձություններով մշտապես հետաքրքրվող Ռիկա Օնոդերան:

Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի ռեկտոր՝ պրոֆեսոր Սոնա Հովհաննիսյանը և ԵՊԿ պրոռեկտոր Ծովինար Մովսիսյանը, ԵՊԿ ռեկտորի օգնական Շուշանիկ Մեհրաբյանը, Անահիտ Սամսոնյանը, կոնսերվատորիայի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ՝ պրոֆեսոր Սերգեյ Սարաջյանն ընտանիքով, դիրիժոր Ռուբեն Ասատրյանը, պրոֆեսոր Լուսինե Սահակյանն դստեր հետ, Երևանի երաժշտական դպրոցների տնօրեններ՝ Արմինե Մուրադյանը և Նաիրա Վահանյանը, վաստակաշատ ուսուցչուհի, դաշնակահարուհի Հասմիկ Մանուկյանը, ինչպես նաև թանգարանների ներկայացուցիչներ և բազմաթիվ այլ հյուրեր:



*Արփինե Խաչատրյան և Ամելի Ոսկանյան*

Համերգի ընթացքում հնչեցին հայ, ճապոնացի և եվրոպացի կոմպոզիտորների ստեղծագործություններ: Ի դեպ, ճապոնացի կոմպոզիտոր Յոշիանո Նակադայի «Ճապոնիայի տարվա եղանակները» դաշնամուրի համար սյուիտը, ինչպես նաև Ռոբերտ Շումանի «Մանկական դիմակահանդես»-ը և «Վեց դաշնամուրային պար»-ը Հայաստանում կատարվեցին առաջին անգամ:

Համերգը վարեցին Ամելի Ոսկանյանը և Հայաստանում «Հիկարի» կենտրոնի ներկայացուցիչ Արփինե Խաչատրյանը, որոնք տոնական հանդերձանքով հանդես եկան «Տերյան» մշակութային կենտրոնի տնօրեն Լիլիթ Մելիքյանի կողմից սիրահոժար տրամադրված հայկական շքեղ տարազով և «Հիկարի» կենտրոնի տնօրեն Կարինե Փիլիպոսյանի կողմից՝ ճապոնական կիմոնոյով:

Երեկոյի ընթացքում ներկայացվեց հետաքրքիր ֆիլմ՝ Հայաստանի և Ճապոնիայի գեղատեսիլ վայրերի պատկերներով, որը պատրաստել էին ռեժիսորներ Հասմիկ Ազատյանը և Հակոբ Թումանյանը, կինոօպերատոր Հակոբ Կարանֆիլյանը: Ֆիլմի հեռարձակումն ապահովեցին ԵՊԿ հասարակայնության հետ կապերի պատասխանատու Անահիտ Մինասյանը և ԵՊԿ ակուստիկ լաբորատորիայի ղեկավար Սերգեյ Ումրոյանը: Միջոցառումը պատշաճ անցկացնելու համար ջանքերը չխնայեց ԵՊԿ տնտեսական մասի ղեկավար Ռուբեն Ղևոնդյանը:

Միջոցառումը նկարահանեցին օպերատոր Հայկ Պետրոսյանը և լուսանկարիչ Ռոբերտ Ասատրյանը, պաստառները ձևավորեց Դավիթ Ոսկանյանը:

Համերգի մասնակիցները շնորհակալություն են հայտնում բոլոր նրանց ով մեծ աջակցություն ցուցաբերեցին համերգի իրականացմանը:

Շնորհակալություն մեր մշտական բարեկամ՝ ԵՊԿ-ի «Երաժշտական Հայաստան» ամսագրի և թերթի հիմնադիր և գլխավոր խմբագիր, հարգելի Գոհար Շագոյանին:

**ՄԱՐԻՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ**
***դաշնակահար***

❖ ❖ ❖

Ալեքսանդր Սպենդիարյանի 150-ամյակին նվիրված




«Ֆորտե» համահայկական երաժշտական փառատոնին ԵՊԿ ուսանողների ակտիվ մասնակցության համար ԵՊԿ ռեկտոր Սոնա Հովհաննիսյանի անունով ստացվել է շնորհակալագիր:

❖ ❖ ❖

Հայ երաժշտարվեստի զարգացման, սերունդների կրթման, դաստիարակման գործում մեծ ներդրում ունենալու համար և ծննդյան 85-ամյա հոբելյանի կապակցությամբ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի



պրոֆեսոր, բանագիտության ամբիոնի վարիչ ***Ալինա Փահլևանյանը*** պարգևատրվել է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Ոսկե մեդալով:

Վաստակաշատ երաժշտագետին պարգևը հանձնել է ՀՀ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը: *«Նախարարությունը բարձր է գնահատում Ձեր հայրենանվեր գործունեությունը, որ տասնյակ տարիներ իրականացնում եք երաժշտագիտության և բանագիտության ոլորտներում: Հանդիսանալով բազմաթիվ մասնագիտական գրքերի, թարգմանությունների հեղինակ՝ մինչ օրս շարունակում եք մեծագույն սիրով և պրոֆեսիոնալիզմով կրթել ու դաստիարակել երիտասարդ սերնդին՝ չխնայելով ջանք և եռանդ նրանց մասնագիտական կայացման գործում»,*- ընդգծել է նախարարը՝ հավելելով, որ այս պարգևը համեստ գնահատականն է վաստակաշատ մտավորականի կատարած մեծ աշխատանքին:

Հանդիպմանը ներկա էին նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արա Խզմալյանը, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ռեկտոր, պրոֆեսոր Սոնա Հովհաննիսյանը, Կոմիտաս թանգարան-ինստիտուտի տնօրեն Նիկոլայ Կոնստանդյանը:

ԵՊԿ ռեկտոր Սոնա Հովհաննիսյանն էլ փաստել է Ալինա



Փահլևանյանի անգնահատելի վաստակը և նշել, որ լինելով կոնսերվատորիայի հիմնասյուներից՝ նա միշտ արդիական է, բոլոր ժամանակներում՝ ժամանակակից:

Ալինա Աշոտի Փահլևանյանը 1970-ից դասավանդում է Երևանի պետական կոնսերվատորիայում (բանագիտության ամբիոնի վարիչ՝ 1992-ից, պրոֆեսոր՝ 1996-ից):

Ալինա Փահլևանյանի ուսումնասիրությունները վերաբերում են երաժշտական բանագիտության տեսությանը: Հեղինակել է «“Կարոս խաչ” վիպական ասքի նորահայտ պատումները» (2004 թ.), «Հայ երաժշտական ֆոլկլորագիտության խնդիրները» (ռուսերեն, 2005 թ.) աշխատանքները, Հայրիկ Մուրադյանի կատարումներից վերլուծել և կազմել է «Հայրենի երգեր» ժողովածուն (1980 թ., 3-րդ հրատարակություն, 2018 թ.), «Հայկական ժողովրդական երգեր և նվագներ. Թալին» (1984 թ., 2-րդ հրատարակություն, 2012 թ., համահեղինակ), «Հայրենական մեծ պատերազմը հայ ժողովրդական և գուսանական երգերում» (1995 թ., համահեղինակ) ժողովածուները: Հրատարակել է «“Սասնա ծռեր” դյուցազնավեպը» (1996 թ., համահեղինակ), «Հայ ժողովրդական երգեր և նվագներ» մատենաշարը (2009 թ., 2013 թ., 2014 թ.), «Հայ երաժշտական ֆոլկլորի ռիթմիկայի առանձնահատկությունները» (2014 թ.) դասագիրքը: Հեղինակ է նաև հանրակրթական դպրոցի երաժշտության դասագրքերի (I-VII դասարան) և մեթոդական ձեռնարկների: Ռուսերենից թարգմանել, խմբագրել և կազմել է «Արամ Խաչատրյան. նամակներ» (2003 թ.) ժողովածուն:

https://escs.am/am/news/11624?fbclid=IwAR185Aqv P3geMuMK2Kroy6-9ghr7pWOuC_Zz6AThx-juh38QyWf0ZCrabfg

❖ ❖ ❖

ՀՀ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանն ընդունել է ԵՊԿ Օպերային Ստուդիայի գեղարվեստական ղեկավար ***Հասմիկ Պապյանին***: Հանդիպմանը ներկա էր նաև նախարարի տեղակալ Արա Խզմալյանը:

Զրույցի ընթացքում տիկին Պապյանը նշել է, որ 32 տարի արտերկրում ապրելուց հետո 2020-ին վերադարձել է Հայաստան և ստանձնել Կոնսերվատորիայի օպերային



ստուդիայի գեղարվեստական ղեկավարի պարտականությունները.

*«Սա լավագույնն էր, ինչով կցանկանայի զբաղվել: Սա հնարավորություն է՝ իմ օրինակով ուղղորդելու տեղացի երիտասարդներին, նրանց հասցնելու մեծ բեմեր՝ առավելագույնս օգտագործելով իմ ներուժն ու կարողությունները»,*- նշել է Հասմիկ Պապյանը հանդիպման ընթացքում:

https://www.aravot.am/2022/02/09/1246576/?fbclid=IwAR26apvvTmqMcZ SRWfYbSh7qI6jXz_uEgKa1DIzUmTFMg30aLoHMLzcPvmY

❖ ❖ ❖

Փետրվարի 4-ից 6-ը Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան, Հայաստանի բուհերի արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը և Solidarity center միջազգային կենտրոնը, Հայաստանի մասնաճյուղի հետ համագործակցության շրջանակ-




ներում, կազմակերպել էին բուհերի արհեստակցական կազմակերպությունների ներկայացուցիչների արտագնա սեմինար:

Սեմինարի մասնակիցների թվում էին նաև Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի արհեստակցական կազմակերպության ներկայացուցիչները՝ Գոհար Նշանյանը, Արամ Ավետյանը և Նոնա Ոսկանյանը:

## Վալերի Ապրեսի Հարությունյանի ծննդյան 80-ամյակին



*Հովհաննես Հովհաննիսյան, Գալինա Ցոլակյան, Կարեն Լավչյան*



*Վալերի Հարությունյանի անվան մրցույթ-փառատոն*



*Արթուր Աղաջանով*



*Կոնստանտին Սիմոնյան*



*Գայանե Գեղամյան*



*Ալեքսանդր Թամազով*



*Հայկ Ավդալյան, Արտյոմ Հարությունյան*

Վալերի Ապրեսի Հարությունյանի ծննդյան 80-ամյակին նվիրված Շնորհանդես-համերգը վերածվեց հանդիսավոր երեկոյի, որի ընթացքում տեղի ունեցավ *“Basso exstraordinaire, Brillant”* գիտամեթոդական հոդվածների ժողովածուի շնորհանդեսը: Միջոցառմանը ներկա էին ԵՊԿ ռեկտոր, պրոֆեսոր Սոնա Հովհաննիսյանը, գիտության գծով պրոռեկտոր Ծովինար Մովսիսյանը, ինչպես նաև պրոֆեսորադասախոսական կազմը, Հարությունյանի սաներն ու գործընկերները:

Հոբելյանական երեկոն պատրաստել էին նրա հավատարիմ գործընկեր՝ ԵՊԿ պրոֆեսոր, Վալերի Հարությունյանի երկարամյա կոնցերտմայստեր, դաշնակահար Մարգարիտ Սարգսյանը և գրքի հրատարակչական գործին ձեռնամուխ եղած “ԵՊԿ հրատարակչություն”-ը հանձինս գլխավոր խմբագիր-հիմնադրի, երաժշտագետ Գոհար Շագոյանի, ով հանդես եկավ ներածական խոսքով և վարեց միջոցառման ընթացքը: Նա իր խոսքում նշեց, *«Պատահականություն չէ և նախախնամություն է, որ Վալերի Հարությունյանը ծնվել է 1941 թվականի, հոկտեմբերի 8-ին, երբ Հայ Առաքելական Եկեղեցին նշում էր Թարգմանչաց տոնը: Հայ Առաքելական Եկեղեցին մեծ դերակատարություն ունեցավ Վ. Ա. Հարությունյանի կյանքում՝ օգնեց, որ նա վերադառնա Հայրենիք և իր ամբողջ կյանքում գործեց ի փառս Հայոց Եկեղցու (Սուրբ Էջմիածնի երգչախմբում հանդես գալով որպես մենակատար) և Հայ Օպերային արվեստի: Նա նաև վառ մանկավարժ էր, ով տարիների ընթացքում դաստիարակել է ակադեմիական մեներգեցողության բազում սերունդներ: Պատահականություն չէր, որ եկեղեցու կոնդակով հաստատված բարձրագույն մեդալով պարգևատրմանը նրա աշխարհիկ արվեստն ու կյանքը ներկայացրեց երգչի վաղեմի բարեկամ, կոնսերվատորիայի “ԵՊԿ հրատարակչության” տնօրինությունը հանձին այն ժամանակ գործող հրատարակչության բաժնի վարիչ և “Երաժշտական Հայաստան” ամսագրի պատասխանատու քարտուղար՝ Վալենտին Թովմասյանի»:*

Միջոցառման սկզբում Վալերի Հարությունյանի մասին ջերմ խոսք ասած ԵՊԿ ռեկտոր, պրոֆեսոր Սոնա Հովհաննիսյանը: Այնուհետև դահլիճը ողողվեց Հարությունյանական անզուգական և յուրահատուկ ձայնով: Ձայնագրությամբ հնչեց Ֆրանց Լեհարի *“Lippen schweigen”* դուետը ԵՊԿ դոցենտ Մարիա Քոչարյանի հետ (Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի ունեցած 70-ամյա հոբելյանին նվիրված համերգից):

Համերգը մերթընդմերթ ընդմիջվում էր Վ. Հարությունյանի կատարումների տեսահոլովակներով: Ձայնագրությամբ հնչեց նաև Հարությունյանի հայտնի Կալիստենի դերերգը Գաետանո Դոնիձետտիի «Պոլիկտոս» օպերայից:

Խոսքով հանդես եկավ նաև ԵՊԿ ակադեմիական երգեցողության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Գայանե Գեղամյանը: Հարությունյանի մեթոդիկայի դասավանդման և գրքում զետեղված հոդվածների մասին խոսեց պրոֆեսոր Մարգարիտ Սարգսյանը, ով գրքի լույս ընծայման գաղափարի հեղինակն ու իրագործողն էր:

Իրենց հուզառատ խոսքով ելույթ ունեցան նաև սաները՝ Մարգարիտ Մարզպանը, Մարիցա Թիլիքյանը (ով Հարությունյանի մոտ էր սովորել մինչև 3-րդ կուրսը ներառյալ և ավարտել է ԵՊԿ-ն Օլգա Գաբանայի դասարանում): Գերմանիայից միջոցառմանը ձայնագրության միջոցով մասնակցեց նաև Վազգեն Ղազարյանը: Նրա կատարմամբ լսեցինք Ջուզեպպե Վերդիի «Դոն Կառլոս»-ից հատված:

Վալերի Հարությունյանի վերջին շրջանավարտը՝ Արթուր Աղաջանովը իր գեղեցիկ ու հզոր ձայնով հանդես է գալիս նաև փոփ երաժշտության բնագավառում: Իր կատարմամբ ունկնդիրները լսեցին Կոնստանտին Օրբելյանի **“Шум берез”** երգը:

Վալերի Հարությունյանի մասին հուշերով ջերմորեն կիսվեց ԵՊԿ պրոֆեսոր, մեներգիչ Կոնստանտին Սիմոնյանը: Այնուհետև Վալերի Հարությունյանի տեսաձայնագրությամբ հնչեց Գեորգի Սվիրիդովի **“Как яблочко румян”** ռոմանսը:

Հարությունյանի սաներից Ռուզան Մանթաշյանն Շվեդիայից ուղարկել էր Գրանդ-օպերայի ներկայացումից Շառլ Գունոյի «Ֆաուստ» օպերայից Մարգարիտայի արիայի կատարումով ձայնագրությունը:

Իր փայլուն կատարմամբ Շնորհանդես-համերգին հանդես եկավ Հարությունյանի սաներից Սերգեյ Սարգսյանը, ով շարունակում է վարել Վալերի Հարությունովի դասարանը Ղազարոս Սարյանի անվան Արվեստի դպրոցում: Նա կատարեց Ջուզեպպե Վերդիի «Սիմոն Բոկկանեգրա» օպերայից Ֆիեսկոյի ռոմանսը: (Նույն համարով նա հանդես էր եկել նաև Արվեստի դպրոցում նախորդ օրը):

Ելույթ ունեցան Վալերի Հարությունյանի անվան մրցույթ-փառատոնի մասնակիցները՝ Գևորգ Մաղաքյանի 7-ամյա աշակերտ Հայկ Ավդալյանին նվագակցել էր Արտյոմ Հարությունյանը:

Բարձր տարիքային խմբում Գրան պրիի ար-

8

# ՔԱՄԻԼ ՍԵՆ-ՍԱՆՍ «ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՇՔԱՀԱՆԴԵՍ»

***Նյութը գրված է որպես ճանաչողական ծավալում հողված դպրոցահասակ երեխաների համար:***

***Այն գտնում ենք անհրաժեշտ նպաստելու երեխաների ուսուցման և ընդհանուր զարգացման համար:***

Թանկագին բարեկամներ, տարիներ առաջ Ֆրանսիայում ապրում էր մի երաժիշտ, որի անունն էր Քամիլ Սեն-Սանս, և նա անսովոր կրքոտությամբ տարված էր իր գործով: Մի անգամ կոմպոզիտորը որոշեց որոշ ժամանակով հանգստանալ և առանձնանալ Ավստրիայի գյուղերից մեկում: Հենց այստեղ էլ, ավստրիական բնության տպավորության ներքո, հեղինակը գրեց «Կենդանիների շքահանդես» սյուիտը:

Սյուիտը ֆրանսերենից թարգմանած նշանակում է «հաջորդականություն», «հերթագայություն»: Այսպիսով, երաժշտական ստեղծագործությունը, որը կազմված է մի քանի հերթագայող, տարաբնույթ պիեսներից, որոնք միավորված են մտահղացման ընդհանրությամբ, հենց սյուիտն է:

«Կենդանիների շքահանդես» հանրահայտ ցիկլը (1886 թ.) Քամիլ Սեն-Սանսը մտահղացել է որպես երաժշտական կատակ: Այս «կենդանաբանական սյուիտի» բացառիկությունն այն է, որ հասկանալի է ինչպես երեխաներին, այնպես էլ մեծահասակներին: Պատանի ունկնդիրները ծանոթանում են կենդանական աշխարհի տարբեր կերպարների հետ, մինչդեռ մեծահասակները նկատում են դրանցում բնորոշ մարդկային կերպարներ և ճանաչում են Ջ. Ռոսսինիի, Ֆ. Մենդելսոնի, Հ. Բեռլիոզի, Ժ. Օֆենբախի ծանոթ մեղեդիները:

Ահա դանդաղ քայլում է ինքնասիրահարված և գոռոզ Առյուծը՝ պատրաստ դաս տալ յուրաքանչյուրին, ով համաձայն չէ իր «արքայական» կարգավիճակի հետ: Ահա օպերետի դանդաղեցված մեղեդու ներքո հազիվհազ սողում են կրիաները: Որքան հեգնանք կա այստեղ: Նաև «Փղերի» ծանրքաշային վալսում է այդ հեգնանքը դրսևորվում: Հեգնանքից զուրկ միակ պիեսը «Կարապն» է: Չցանկանալով անլուրջ կոմպոզիտորի համբավ ձեռք բերել՝ Կ. Սեն-Սանսն արգելեց իր կենդանության օրոք հրապարակել «Կենդանիների կառնավալի» բոլոր պիեսները՝ բացառությամբ այս պիեսի: «Կարապը» առաջին կատարումից անմիջապես հետո դարձավ շատ հանրաճանաչ: Նմանատիպ համբավ էր սպասվում այս ամբողջ հիասքանչ ստեղծագործությանը:

(Տեսանյությունում սյուիտը կկատարվի մի փոքր այլ կազմով. Նորա Շեկյան՝ առաջին ջութակ, Մարիա Բաժկովա՝ երկրորդ ջութակ, Մարալ Վերբոլ՝ ֆլեյտա, Շուշան Ղազարյան՝ կիթառ, Եկատերինա Նազարովա՝ դաշնամուր: Տեսանյութը կարող եք գտնել հետևյալ հղումով. https://youtu.be/gS59bW3QBwA)

Իսկ այժմ, սիրելի ունկնդիրներ, առաջարկում եմ ձեզ պատրաստել նկարչության ալբոմ, գունավոր մատիտներ, ֆլոմաստերներ կամ ներկեր (ով ինչ ունի) և երաժշտության ներքո սկսեք նկարել կենդանիներին՝ ցուցադրելով և շեշտելով դրանցից յուրաքանչյուրի բնութագրական գիծն ո շարժուձևը: Մեծահասակ ունկնդիրներն այս հիանալի սյուիտը լսելիս կարող են իրենց «կտավի» վրա պատկերել նաև սարկազմ և հեգնանք:

Սյուիտն սկսվում է նախաբանով. թվում է, թե այդ հնչյունների մեջ ընդհանրապես ներդաշնակություն չկա, որ երաժիշտները խաղով են տարվել, համերգից առաջ տաքացնում են մատներն ու գործիքները: Բայց այստեղ ուրախ կակաֆոնիայի ձայնը խզվում է դաշնամուրի անզուսպ գլիսանդոյով: (Սա այն է, երբ 3 մատները արագորեն սահում են ստեղների վրա՝ շրջելով ձեռքի ափը):

Եվ առաջինը պիեսում նկարագրվում են, ի՞նչ եք կարծում, որ կենդանիները. ճիշտ եք, Առյուծները՝ կենդանական աշխարհի թագավորները: Ի՞նչն է բնութագրական առյուծի համար, բացի տպավորիչ տեսքից: Ճիշտ է, դուք այս անգամ էլ գլխի ընկաք՝ առյուծի մռնչոցը: Առյուծի ահեղ մռնչյունը պարզ և տպավորիչ կերպով փոխանցվում է դաշնամուրային օկտավաների քրոմատիկ ալիքներով: Այդ մռնչոցը հնչում է ամբողջ պիեսի ընթացքում: Իսկ հիմա կլսենք արքայական երթը: Առյուծները հանդիսավոր քայլում են հպարտ և վեհ:

Եվ ահա, ի հակակշիռ տպավորիչ առյուծների, բեմ են մտնում ծղրտացող, քառտիկ վազվզող հավերն ու ճտերը: Նույնիսկ ավագ աքաղաղը իր խիստ ծուղրուղուով չի կարողանում իր հարազատներին կարգի հրավիրել:

Հետաքրքիր է, ինչ գործիքներով են նվագում այս հատվածը: Ճիշտ է, լարային: Ֆլեյտան պատկերում է աքաղաղի խիստ կռթկռթոցը: Իսկ պատահաբար հայտնված հնդկահավին պատկերում է կիթառը: Դաշնամուրը ավարտում է թռչունների անտանելի շատախոսությունը մի հզոր ակորդով: Հարկ է նշել, որ հավերի մոտիվը Սեն-Սանսը վերցրել է մեկ այլ ֆրանսիացի կոմպոզիտորից՝ Ֆրանսուա Կուպերինից, որը հեղինակից երկու դար առաջ էր ապրել:

Ինչ-որ տեղ՝ հեռվում, հայտնվում են արագ վազող անտիլոպները: Այս կոմպոզիցիայում դաշնակահարուհին ցույց է տալիս գործիքին տիրապետելու վարպետությունը, ցուցադրելով մատների զարմանալի սահունություն:

Հաջորդ համարը սարսափելի դանդաղ կինչի: Գիտե՞ք ինչու: Ճիշտ է, սա դանդաղաշարժ կրիաներն են պարում: Նրանք ջրում են արագ լողում, իսկ ցամաքում հազիվ սողալով են շարժվում: Իհարկե, ձեր կյանքում գոնե մեկ անգամ լսել եք «կան-կան» կոչվող չարաճճի մեղեդին: Ժակ Օֆենբախի «Օրփեոսը դժոխքում» օպերետից այս պարը արդեն վաղուց ապրում է իր կյանքով, ինչը չի կարելի ասել հենց օպերետի մասին: Իսկ հիմա պատկերացրեք, թե ինչպես են այս պարը պարում կրիաները: Պատկերացնո՞ւմ եք: Հավանաբար, երաժիշտների համար հեշտ չէ, աղեղները դանդաղ շարժելով լարերի վրայով, կատարել համարը՝ հազիվ զսպելով ծիծաղը՝ տեսնելով, թե ինչպես են անշնորհք սողունները կատարում «կան-կանը»: Հենց այնպես չի կոմպոզիտորը ստեղծագործության մեջտեղում գրել կեղծ ակորդը. Եվ անճարպիկ կրիաները տրորում են իրենց թաթերը:

Նկատե՞լ եք, Սեն-Սենսը համարների հերթագայության հարցում շեշտը դնում է հակադրության վրա: Առյուծի մռնչոց, վսեմություն, և անդադար կռթկռթոց ու քաոս: Արագություն, այծքաղների (անտիլոպների) ճկունություն և դանդաղկոտություն, անճարպիկ ընթացք: Ստորին ռեգիստր - վերին ռեգիստր: Եթերայնություն, թեթևություն - գարշելիություն, ծանրություն: Անճկուն մեծ ծանրաքարշներ և անճկուն փոքրիկ թեթև քաշայիններ:

Եվ ահա հաջորդ համարը տրամադրվում է անճոռնի մեծ պարողներին: Գլխի ընկա՞ք՝ որ կենդանու մասին ենք խոսում: Շատ ապրեք՝ փղերն են: Նրանք շարք են կանգնում և սկսում են դոփել վալսի ռիթմը: Այս անգամ Սեն-Սանսը մեղեդին վերցրել է իր գործընկերներ Բեռլիոզից՝ «Ֆաուստի դատապարտումը» դրամատիկ լեգենդից՝ սիլֆերի պարը և Մենդելսոնից՝ «Ամառային գիշերվա երազ» սյուիտից՝ սկերցո:

Նրանց երկու եթերային պարերը այժմ ծառայում են որպես նվագակցություն վալս պարող փղերի համար: Գործիքների ռնգախոս բասը աղավաղում է պարի հնչման թեթևությունը:

Եկել է երկար ոտքերով ցատկոտող կենգուրուների հերթը: Կենգուրուների զանգվածեղ թաթերի շրմփոցը փոխանցելու համար կոմպոզիտորը ստիպված էր օգտագործել ֆորշլագներ. սա այն է, երբ մոտակա երկու հնչյունները հնչում են հերթագայությամբ: Պատկերացրեք, կարծես մի նոտան շտապում է և հաջորդ նոտայից առաջ է ընկնում: Հենց այսպիսի ֆորշլագներից է կազմված հաջորդ կտորը: Ֆլեյտայի ֆորշլագի թեթևությունը հերթագայվում է կիթառի նվագակցությամբ:

Իսկ հիմա մենք կլսենք բացարձակապես կախարդական երաժշտություն: Նրա ձայնի թեթևությունը մեզ տանում է բոլորովին այլ միջավայրի: Գուշակեցի՞ք: Ճիշտ է: Կոմպոզիտորը մեզ տեղափոխում է ջրային միջավայր. սա ակվարիումն է: Արեգակի ճառագայթները լուսավորում են ձկներին ծիածանի բոլոր գույներով: Օդի փոքրիկ պղպջակները ոչ միայն կարող ենք տեսնել ջրի մեջ, այլև լսել: Դաշնակահարուհին մեզ լսել կտա այդ պղպջակները դաշնամուրի վերին ռեգիստրի հիանալի հնչյուններով, և այդ ամենը պատկերեցրեք ջութակահարների գեղեցիկ մեղեդու ներքո:




*Թագուհի Օնանյան, Շուշան Ղազարյան, Նորա Շեկյան, Եկատերինա Նազարովա, Մարալ Վերբոլ, Մարիա Բաժկովա*

Գույների գեղեցիկ հերթագայումը փոխարինվում է վայրի էշերի զռզռոցով: Ջութակահարները արագորեն շարժում են աղեղները լարերի վրայով մեկ վերին ռեգիստրում, իսկ հետո՝ ցածր ռեգիստրում:

Իսկ հիմա մենք կտեղափոխվենք անտառ: Խիտ փշատերև անտառի խորքում՝ ինչ-որ տեղ, կկվի ձայն է լսվում: Անտառային լանդշաֆտը պատկերող դաշնամուրային ակորդների ներքո, ֆլեյտահարուհու կատարմամբ հնչում է կկվի խուլ երգը:

Եկել է թռչող թռչունների հերթը: Թևերի թափահարումն ու սուլոցը լցնում են բեմը: Սա աննկարագրելի տեսարան է: Նրանք կներկայացնեն թռիչքի վարպետության տպավորիչ տեխնիկա: Եվ ո՞ր գործիքն է նվագելու այս մեղեդին, գուշակեցի՞ք: Ճիշտ է՝ ֆլեյտան: Դայլայլը, պասաժներ ու ելևէջումներ՝ այն ամենը, ինչ բնորոշ է ֆլեյտայի մեղեդուն, պատկերավոր ներկայացնում են թռչունների ժխորը: Մենք լսում ենք, թե ինչպես է ազատ թռչունի առույգ երգը տարբերվում հավերի հիմար կռթկռթոցից:

Նախավերջի համարը կոչվում է «Պեղումներ»: Հանելուկ է մնում, թե ինչու Սեն-Սանսը այս պիեսին նման անվանում է տվել: Հավանաբար, նկատի ունի վոկալ և տեխնիկական կատարման անդրջրիեղեղյան, հնացած ձևերը: Այստեղ հեղինակը օգտագործել է իր «Մահվան պար»-ի թեման՝ ասես մտնելով անդրշիրիմյան աշխարհ: Պիեսի երաժշտական նյութի հիմքում Սեն-Սանսը դրել է նաև հնագույն Ֆրանսիական երգերի ծանոթ մեղեդիները. հնաոճությունն ընդգծվում է բարդ պոլիֆոնիկ ոճերով: Ռոսսինիի «Սևիլյան սափրիչը» օպերայի Ռոզինայի կավատինայի մոտիվով՝ կավատինայի փայլատակող կոլորատուրայի իմիտացիայով, նա հիշեցնում է, որ այս երաժշտական կատակը վերջին պեղածոն է:

Շքերթն ավարտում է հիասքանչ կարապը: Լսվում է ջրի թեթև ճողփյունը: Գեղեցիկ կարապը հանդիսավոր և վեհորեն լողում է թռչունների ժխորը: Մենք լսում ենք, թե ինչպես է ազատ թռչունի առույգ երգը տարբերվում հավերի հիմար կռթկռթոցից: Նախավերջի համարը կոչվում է «Պեղումներ»: Այս հանճարեղ երաժշտությունը միակն էր ամբողջ ցիկլից, որը խնայել էր Սեն-Սանսը՝ թույլ տալով կատարել իր կենդանության օրոք: Ինչ երջանկություն է, որ դեռ այդ ժամանակներում այս երաժշտությունը հնչեց բեմից՝ հալեցնելով մարդկանց սրտերը:

Եզրափակիչը կենդանիների ընդհանուր ցնծությունն է: Եթե ուշադիր լսեք, կարող եք տարբերակել կենդանիների առանձին ձայները: Բոլորը պարում և երգում են: Պատրաստվեք երաժշտության եզրափակիչ մասում հանդիպել այն բոլոր կերպարներին, որոնց մասին դուք իմացաք այսօր:

**ԹԱԳՈՒՀԻ ՕՆԱՆՅԱՆ**
*երաժշտագետ*

# Վալերի Ապրեսի Հարությունյանի ծննդյան 80-ամյակին

7

ժանացած Գալինա Ցոլակյանը կատարել էր Ալեքսանդր Դոլուխանյանի «Ծիծեռնակ» երգը:

Շի Շուանի (Չինաստանի ժողովրդական հանրապետություն) կատարմամբ՝ ձայնագրությամբ, հնչեց Երանյան-Կոմիտասի «Հայաստան» երգը:

Վալերի Հարությունյանի հետ համագործակցության, Ա. Սպենդիարյանի անվան օպերային թատրոնում գործունեության տարիների մասին պատմեց Ալեքսանդր Թամազովը:

ՀՀ Նախագահի մրցանակակիր Անդրանիկ Մալխասյանի անզուգական կատարմամբ հնչեց Նիկոլ Գալանդերյանի «Մնաք բարով» երգը: Եվ միջոցառման ավարտին Եվրոպական ճանաչում ստացած, Գերմանիայի օպերային թատրոններում հանդես եկող անվանի մեներգիչ Գուրգեն Բավեյանի կատարմամբ հնչեց Արմեն Տիգրանյանի «Դավիթ Բեկ» օպերայից Գուսանի երգը:



*Գոհար Շագոյան, Սերգեյ Սարգսյան*



*Անդրանիկ Մալխասյան, Մարգարիտ Սարգսյան*



*Գուրգեն Բավեյան, Մարգարիտ Սարգսյան*

**ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ**
*երաժշտագետ, «Երաժիշտ» ամսաթերթի հիմնադիր և թողարկման պատասխանատու*

# Жизнь в музыке

1

**В 2021 году в Ереване в "Издательстве ЕГК" вышел в свет очерк профессора ЕГК им. Комитаса Шушаник Огановны Бабаян "Жизнь в музыке", посвященный 90–летию замечательного музыканта, пианиста, музыковеда, заслуженного артиста Армении, професора Вилли Вагановича Саркисяна (рецензенты проф. С. Г. Сараджян, доктор искусствоведения М. А. Рухкян).**

***"Заслуженный артист Армении, профессор Вилли Ваганович Саркисян принадлежит к плеяде замечательных армянских музыкантов, которая составляет гордость армянской фортепианной школы. Во всех сферах, – в исполнительстве и педагогической деятельности, в композиторском творчестве и музыковедческих исследованиях, – проявляются особые свойства его многостороннего таланта, необычайная глубина знаний и эрудиция. Стремление к постоянному, глубинному изучению своего искусства – отличительная черта характера Вилли Вагановича. Подчеркнем, речь идет не о бесконечном совершенствовании мастерства, что вполне естественно для творческого человека, а именно о вечном поиске, постижении сути исполнительского искусства. Возможно, эта особенность определила масштаб и разнообразие его интересов в музыкальной деятельности"*** **(С. 5).**

***"Первым учителем Вилли Вагановича после матери, с момента поступления в детскую группу, т. е. с пяти лет, стала Анна Михайловна Мнацаканян. У Анны Михайловны учились многие будущие замечательные музыканты. Потребность сочинять, почти обязательная сопутствующая примета талантливого музыканта–исполнителя, проявилась у Вилли Саркисяна с ранних лет. Возможно, здесь сказалось влияние матери. Анетта Сергеевна Хаханян–Саркисян, пианистка, воспитанница Тбилисской консерватории по классу известного педагога Л. Л. Трусковского, до конца своих дней преподавала общий курс фортепиано в музыкальном училище имени Романоса Меликяна, была любима и уважаема коллегами и учениками. По словам Вилли Вагановича, она "немного сочиняла". Надо сказать, что и отец, Ваган Осипович, уроженец Шуши, получил музыкальное образование в духовной семинарии Эчмиадзина, пел в хоре под управлением Комитаса, играл на кларнете. В семье рассказывали, что Комитас тепло относился к отцу, называя его ласково*** «դուդուկչի»*"* **(С. 7).**

***"Разносторонняя одаренность, стремление к более широкому и глубокому охвату музыкальных проблем, нежелание ограничивать себя только исполнительством проявились в том, что В. Саркисян оканчивает с отличием Ереванскую консерваторию по двум специальностям – специальное фортепиано (по классу профессора К А. Малхасян) и музыковедение (руководитель – профессор А. А. Барсамян)"*** **(С. 9).**

***"В годы учения В. В. Саркисяна в Ереванской консерватории курс лекций по эстетике читал выдающийся ученый, второй после Романоса Меликяна директор Ереванской консерватории (1924–1926) Аршак Абгарович Адамян – уникальная личность, напоминающая по разносторонности дарований и творческих проявлений в различных областях искусства о талантах эпохи Возрождения. Как писал Вилли Ваганович, "судьба даровала мне счастье: обучаться эстетике у Аршака Абгаровича Адамяна. Однако милость судьбы проявилась и в том, что я был допущен к его благосклонной дружбе".***

***Для В. Саркисяна встреча с А. А. Адамяном оказалась решающей. В этом удивительном человеке высокой культуры и энциклопедических знаний, музыканте и философе, он встретил тот идеал, к которому интуитивно и сам стремился"*** **(С.12).**

***"Дружеское общение с А. Адамяном продолжалось до самой кончины Аршака Абгаровича в 1956 году, Вилли Ваганович остался верен учителю и в тяжелый период преследований, настоящей травли А. Адамяна. Неудивительно, что сразу после смерти Аршака Абгаровича Нина Степановна Адамян, его жена, с полным доверием передала В. Саркисяну весь огромный архив ученого, в том числе, неоконченные статьи, исследования и т. д. Дальнейшее показало, насколько она не ошиблась в выборе человека, которому можно доверить рукописи"*** **(С.14).**

***"Невольно испытываешь ностальгию по тем временам, когда Дом композиторов в Дилижане, чаще всего в летние месяцы, становился средоточием культуры, где можно было встретить великих музыкантов, выдающихся исполнителей, где гостили Ю. Тюлин, Д. Шостакович, Б. Бриттен, М. Ростропович, Г. Вишневская; Р. Щедрин, М. Плисецкая, Г. Канчели; отдыхали, занимались, творили выдающиеся армянские композиторы, исполнители, открывая для себя безграничные возможности и ничем невосполнимую ценность творческого общения художников.***

***Обстоятельства, при которых состоялась встреча В. Саркисяна с Д. Д. Шостаковичем, интересны и характерны для дилижанского Дома композиторов тех лет.***




***Великий композитор пригласил Вилли Вагановича в свой коттедж. Трудно описать чувства и переживания человека при общении с гением, пожалуй, точнее всего удалось передать эти ощущения М. Л. Ростроповичу. При встречах, по словам В. Саркисяна, они говорили о фортепианном исполнительстве, об Аршаке Абгаровиче.***

***От тех встреч у Вилли Вагановича остались автограф Д. Д. Шостаковича в нотах и память о величайшем композиторе XX столетия. Через четыре года (1967) В. Саркисян впервые в Армении сыграл Сонату - 2 ор. 61 Шостаковича"*** **(С.16).**

***"Даже краткий обзор почти 70–летней концертной деятельности В. Саркисяна потребовал бы многих страниц, но мы остановимся на отдельных, лейтмотивных линиях исполнительства, которые можно проследить с самых ранних концертов.***

***Вилли Ваганович Саркисян много играет Шопена, Шумана, Скрябина (от ранних опусов до Шестой сонаты ор.62 включительно), а из армянских композиторов – Комитаса, его Танцы он включает почти во все концерты. В музыке этих композиторов наиболее полно раскрывается исполнительская индивидуальность В. Саркисяна, ее особые привлекательные качества – тонкость и благородство, которое отличает некоторая сдержанность, словно оберегающая от преувеличений в выразительности. Неслучайно московские и ереванские музыканты замечали в нервном, поэтическом облике В. Саркисяна, в его концертном поведении (особая сдержанность, собранность), исполнительской манере сходство с В. В. Софроницким. Напомним, что среди любимых исполнителей Вилли Вагановича – С. Рихтер, В. Софроницкий, Г. Гульд, А. Бенедетти Микеланджели"*** **(С.26).**



**С Мартиросом Сарьяном**
**в Доме–музее Мастера**



***"Творчеству армянских композиторов В. В. Саркисян иногда посвящал целые концертные программы; постоянны были и выступления в авторских вечерах, чаще всего в зале Союза композиторов Армении, где он нередко являлся первым исполнителем представленных произведений. Так В. Саркисян – первый исполнитель "Полифонической сонаты" и "Шести настроений" А. Арутюняна. Напомним, что "Шесть настроений" и "Фортепианный триптих" Сергея Агаджаняна посвящены первому исполнителю этих произведений – Вилли Вагановичу Саркисяну. Хочется отметить и запись фортепианных произведений Гаяне Чеботарян на пластинку (фирма "Мелодия")"*** **(С. 27).**

***"Дух просветительства, характерный для концертной деятельности Вилли Вагановича, проявляется и в исполнении Баха. С баховскими программами В. Саркисяна связаны интереснейшие страницы концертной жизни Еревана.***

***Так, в 1969 году в зале Ереванской консерватории В. Саркисян сыграл в два вечера "Хорошо темперированный клавир" – все 48 прелюдий и фуг. Как говорит Вилли Ваганович, рассказывая об этом событии, "мы все преклоняемся перед гением Баха и, постоянно изучая его творения, стремимся к познанию мастера, а единственный путь к познанию – осуществить его замысел во всей полноте", и добавляет: "Я ощущал себя вполне счастливым, играя все прелюдии и фуги "Хорошо темперированного клавира")"*** **(С.29).**

***"Исполнительская линия армянской музыки была продолжена в творческих работах В. В. Саркисяна (2005–2020) – в переложениях вокальной, инструментальной музыки армянских композиторов для фортепиано. Именно в сфере композиторского творчества просветительская направленность всей деятельности Вилли Вагановича обозначилась ярче всего.***

***Возможно, наиболее значительная работа В. В. Саркисяна в этой области – переложения 35 (!) Песен Комитаса. Имя Комитаса для Вилли Вагановича свято и дорого с детских лет (напомним, что отец Вилли Саркисяна пел в хоре Комитаса). Его Танцы он исполнял почти во всех своих концертах. Обширные знания жизни и творчества Комитаса, глубокое понимание его музыкального стиля в полной мере проявились в фортепианных переложениях песен, где нашли воплощение мельчайшие особенности фортепианого стиля великого композитора. Комитасу свойственны лаконизм, отточенность письма, каждая песня совершенна в своей лапидарности и образной точности. В фортепианных переложениях В. Саркисян бережно сохраняет эти качества, фактура прозрачная, легкая с элементами полифоничности*** **(С. 37** ***Широкая педагогическая деятельность В. В. Саркисяна (он работал с 1954 г. в музыкальном училище имени Романоса Меликяна, в Ереванской консерватории имени Комитаса, в школе–десятилетке имени П. Чайковского, а в 1992–2000 гг. заведовал кафедрой специального фортепиано ЕГК) заслуживает особого внимания и более детального рассмотрения; мы же ограничимся лишь некоторыми наблюдениями и воспоминаниями.***

***Разумеется, Вилли Ваганович Саркисян – прирожденный учитель. Как можно заметить, во всей музыкальной деятельности, в исполнительстве, теоретических исследованиях, творческих работах В. Саркисяна проявляются черты, соответствующие духовному облику истинного учителя: необычайный, разнообразный талант, мастерство, широкие знания и эрудиция, глубокая культура. Но есть и нечто большее, имеем в виду нравственные, удивительные этические качества. Напомним, сколько труда, сил и времени вложил Вилли Ваганович в незавершенные труды и сочинения учителей, Аршака Адамяна и Роберта Андриасяна, сознавая высокую ответственность и обязательства перед армянской музыкальной культурой. Думаем, именно подвижничество, свойственное натуре В. В. Саркисяна, придает особую ценность его преподаванию, что, безусловно, ощущали, иногда чисто интуитивно, все его ученики"*** **(С.41).**

***"Притягательная сила педагогики В. В. Саркисяна заключается в его увлеченности музыкой, которая не может не "заражать" студентов, учеников, окружающих, создавая особую творческую атмосферу в общении с ним. Увлеченность музыкой ограждает Вилли Вагановича от мелких, суетных, псевдомузыкальных забот, позволяет ему и в солидном возрасте сохранять энергию и молодость духа, открывать каждый день что–то новое, не известное ранее в его любимом фортепианном искусстве и делиться своими открытиями с окружающими. Необычайное воспитательное воздействие оказывает духовный облик Музыканта, каждый день подтверждающего, что "искусство – самый прекрасный строгий, самый радостный и благой символ извечного, неподвластного рассудку стремления человека к добру, к истине и совершенству…"*** **(С.43).**

# «ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

❖ ❖ ❖

Հունվարի 24-ին տեղի ունեցավ Հայաստանում «ԷՐԱԶ-ՄՈՒՍ+» ազգային գրասենյակի ծրագրի համակարգող Լանա Կարլովայի հանդիպումը ԵՊԿ ղեկավարության և պրոֆեսորադասախոսական կազմի հետ:

Հանդիպման շրջանակներում ներկայացվեցին 2022-2027 թթ. համար հայտարարված այն ծրագրերը, որոնց կարող են դիմել հայաստանյան բուհերը: Տիկին Կարլովան խոսեց նաև այդ ծրագրերին մասնակցելու անհրաժեշտ պայմանների մասին, որոնցից է դասախոսների և ուսանողների՝ շարժունության ծրագրերի մասնակցելու համար պահանջվող օտար լեզվի իմացության մակարդակը:



Հանդիպման վերջում տիկին Կարլովան պատասխանեց ներկաների հարցերին:

❖ ❖ ❖

Փետրվարի 4-ին ՀՀ ԿԳՄՍ նախարարությունում տեղի ունեցավ 2021 թ. «Լավագույն ուսանող» մրցույթի մրցանակաբաշխության հանդիսավոր արարողությունը, որին մասնակցեցին ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը, նախարարի տեղակալ, մրցութային հանձնաժողովի նախագահ Կարեն Թռչունյանը, բուհերի ռեկտորներ և ուսանողներ:

Մրցույթը անցկացվել է 7 ոլորտներում՝ բնագիտության, հասարակագիտության, հայագիտության, հումանիտար, բժշկության, ճարտարագիտության և մշակույթ-սպորտ: «Լավագույն ուսանող» մրցույթում հաղթող են ճանաչվել 34 ուսանող, որոնցից 16-ը՝ բակալավրականի կրթական աստիճանով, իսկ 18-ը՝ մագիստրոսականի: Ըստ մրցույթի վերջարդյունքների 1-ին տեղը զբաղեցրել է 13 ուսանող, ում կշնորհվի 445.000-ական դրամ, 2-րդ տեղը՝ 11 ուսանող, ում կշնորհվի 345.000-ական դրամ, իսկ 3-րդ տեղը զբաղեցրած 10 ուսանողի կշնորհվի 220.000-ական դրամ կրթաթոշակ:

*«Սա լավ հնարավորություն է ուսանողների համար՝ զինվելու նոր գիտելիքներով և դրանք ծառայեցնելու մեր երկրի զարգացմանը»,*- նշել է նախարարի տեղակալը:

Մրցանակակիրների թվում էին նաև ԵՊԿ բակալավրականի 4-րդ կուրսի ուսանող, քանոնահար ***Արմինե Հակոբյանը*** (դասախոս՝ պրոֆեսոր Ծովինար Հովհաննիսյան) և ԵՊԿ մագիստրոսականի 2-րդ կուրսի ուսանող, դաշնակահար ***Աստղիկ Ղուկասյանը*** (դասախոս՝ պրոֆեսոր Վաղարշակ Հարությունյան), ովքեր արժանացել են համապատասխանաբար՝ առաջին և երկրորդ մրցանակների:



https://escs.am/am/news/11477?fbclid=IwAR2nPquJFm9hKoX1dkq3mCHPjFNMwL5Rz9L64S0k0WGZYklg-JqCMOiFB9Y

❖ ❖ ❖

ԵՊՀ Մշակույթի կենտրոնում դեկտեմբերի 23-ին տեղի է ունեցել «Երիտասարդ ստեղծագործողների հանրապետական ուսանողական բիենալե 2021»-ի մրցանակաբաշխությունը:

ԵՊՀ Մշակույթի կենտրոնի կողմից նախաձեռնած մրցույթը տեղի էր ունեցել 2021-ի հոկտեմբերին: Մրցույթում ներառվել էին արվեստի ու գրականության տարբեր ուղղություններ և անցկացվել է առցանց տարբերակով, որին մասնակցել են ԵՊՀ-ի, Խ. Աբովյանի անվ. պետական մանկավարժական, Վ. Բրյուսովի անվ. պետական լեզվահասարակագիտական, Հայ-Ռուսական (Սլավոնական), Վանաձորի պետական, Հայաստանի ազգային ագրարային համալսարանների, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի, ինչպես նաև Ոստիկանության կրթահամալիրի ուսանողները:


ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՎՈԳԻՐ
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ուսանող(ուհի)
Զոյա Սարգսյանին,
առ այն, որ նա արժանացել է «Երիտասարդ ստեղծագործողների հանրապետական ուսանողական մրցույթ 2021»-ի գեղանկարչություն անվանակարգում՝
1-ին մրցանակի:
ԵՊՀ ռեկտոր՝ Հ. Վ. Հովհաննիսյան
23.12.2021

Միջոցառմանը ներկա էին ԵՊՀ միջազգային համագործակցության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Արթուր Իսրայելյանը, ԵՊՀ Մշակույթի կենտրոնի տնօրեն Կարինե Դավթյանը, ուսանողներն ու կենտրոնի սաները: Մրցանակաբաշխության ընթացքում պրոռեկտոր Արթուր Իսրայելյանը հավաստագրեր հանձնեց մրցույթի հաղթողներին, ինչպես նաև խրախուսական տեղեր զբաղեցրած ուսանողներին:

Պատվոգիր էր ստացել նաև Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Ակադեմիական երգեցողության բաժնի մագիստրոսականի 1-ին կուրսի ուսանող ***Զոյա Սարգսյանին***, ով մրցույթի «Գեղանկարչություն» անվանակարգում արժանացել էր 1-ին մրցանակի:

Նշենք նաև, որ մրցույթի մրցանակային ու խրախուսական տեղեր զբաղեցրած ուսանողների ստեղծագործությունները տպագրվելու են «Անկախության սերնդի ձայնը» ժողովածուի 2022 թ. հերթական համարում:

http://ysu.am/quality/hy/1404988744/new/92400

## ԵՊԿ ԱՌՕՐՅԱՆ

❖ ❖ ❖

2021 թ. նոյեմբերի 20-ից մինչև 2022 թվականի հունվարի 31-ը անց կացվեց "NOUVELLES ETOILES" V միջազգային երաժշտական մրցույթը: Անցկացման ձևաչափը՝ առցանց, մեկ փուլով: Մրցույթը իրականացրեց Արտիմա (ArtimA) միջազգային մշակութային ասոցիացիան (Փարիզ), Դիվանագիտական և մշակութային ներկայացուցչությունների, «Յունիարտ» (Uniart) միջազգային նվագախմբի (Փարիզ, Ֆրանսիա), Ժան Վիեների անվան կոնսերվատորիայի (Grand Paris, Bobigny), «Փայլուն աղեղներ» (**Блестящие смычки**) կամերային նվագախմբի (Նովոսիբիրսկ, Ռուսաստան) աջակցությամբ:




Արտիմա ասոցիացիայի կողմից ստեղծվել էր 1200 եվրոյի չափով ընդհանուր դրամական մրցանակների ֆոնդ, որը տրվում է Գրան պրիի հաղթողին (հաղթողներին): Բացի Գրան պրի մրցանակից կան նաև հատուկ մրցանակներ. Ֆրանսիայում և այլ երկրներում համերգների (այդ թվում նվագախմբի հետ) մասնակցություն; անվանի մանկավարժների վարպետության դասընթացներին և կոնֆերանսներին մասնակցություն; մրցանակներ և նվերներ հովանավորներից:



"NOUVELLES ETOILES" V միջազգային երաժշտական մրցույթի հաղթողներից է նաև մեր հայրենակիցը: ԵՊԿ լարային բաժնի 1-ին կուրսի ուսանող ***Անի Բադեյանը*** (դասախոս՝ պրոֆ. Արմեն Հարությունյան, նվագակցող՝ Օվսաննա Ալեքսանյան) «Լարային գործիքներ» անվանակարգում արժանացել է 2-րդ մրցանակի:

❖ ❖ ❖

Հունվարի 24-ին տեղի ունեցավ ԵՊԿ Ջազ-փոփ երաժշտության ամբիոնի համերգային երեկոն: Համերգին հնչեցին ինչպես համաշխարհային հիթեր, այնպես էլ ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Նարինե Զարիֆյանի ստեղծագործությունները:







**Լուսանկարները՝ ԹԻՆԱ ԳևՈՐԳՅԱՆԻ**

❖ ❖ ❖



ԵՊԿ բակալավրականի 1-ին կուրսի ուսանող, դաշնակահար ***Արմեն Պուչինյանը*** (դասախոս՝ պրոֆեսոր Կարինե Օհանյան) արժանացել է կանադական Euro Elite միջազգային մրցույթի Պլատինե մրցանակի (Գրան պրի) և Կլարա Շումանի անվան միջազգային մրցույթում (Գերմանիա) 2-րդ մրցանակի:




❖ ❖ ❖

2021 թ. նոյեմբերին՝ Թբիլիսիում Opera Crown միջազգային մրցույթում հաջող ելույթից հետո ԵՊԿ Ակադեմիական երգեցողության բաժնի բակալավրականի 4-րդ կուրսի ուսանող, բարիտոն ***Ակսել Դավթյանը*** (դասախոս՝ ՀՀ վաստակավոր արտիստ, դոցենտ Առնոլդ Քոչարյան) հրավեր ստացավ Ցյուրիխի օպերային թատրոնի կողմից 2022-2023 թատերաշրջանը անցկացնել "International Opera Studio"-ի կազմում:



❖ ❖ ❖

ԵՊԿ Ակադեմիական երգեցողության բաժնի մագիստրոսականի 2-րդ կուրսի ուսանող, բարիտոն ***Նավասարդ Հակոբյանը*** (դասախոս՝ Սվետլանա Կոլոսարյան) արժանանացել է 1-ին մրցանակի Հյուսթոնի Էլեոնորա ՄակՔոլումի 34-րդ ամենամյա երիտասարդական մրցույթում:



ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Վկայական N 03Ա059505 տրված 7.04.2003թ.
**ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐ՝** Կոմիտասի անվ. ԵՊԿ ՊՈԱԿ
ՍԵՐԳԵՅ ՍԱՐԱՋՅԱՆ, ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ
**Գլխավոր խմբագիր՝** ՄԱՐԳԱՐԻՏԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
**Թողարկման պատասխանատու՝** ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ
**Խմբագիրներ՝** ԱՆՈՒՇ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ (հայ. լեզու),
ՍՈՖԱ ԱԶՆԱՈՒՐՅԱՆ (ռուս. լեզու)
**Գեղարվեստական խմբագիր՝** ԳՈՀԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արտատպումը միայն «Երաժիշտ» ամսաթերթի գրավոր արտոնությամբ: Խմբագրությունը միշտ չէ, որ համամիտ է հեղինակների կարծիքներին կամ տեսակետներին:
Նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում:

Ծավալը 10 էջ: Ստորագրված է 24.02.2022:
Գինը 400 դրամ: Տպաքանակը՝ 101:

Մեր կայքում տեղ գտած հրապարակումների հեղինակային իրավունքը պատկանում է բացառապես «Երաժիշտ» ամսաթերթի «ԵՊԿ հրատարակչությանը» (conservatory.am): Այլ ԶԼՄ-ներում սույն կայքի հրապարակումներից որևէ մեկը ամբողջական վերահրապարակելու համար անհրաժեշտ է «ԵՊԿ հրատարակչության» (conservatory.am) համաձայնությունը: Լրատվամիջոցները կարող են «Երաժիշտ» ամսաթերթից մեջբերումներ վերահրապարակել միմիայն հատվածաբար՝ պարտադիր օգտագործելով հիպերհղում:

Գովազդի տեղադրման համար դիմել խմբագրություն նշված հասցեով.

0001, ք. Երևան, Մարկ Գրիգորյան 2
+374 10 52 39 93+118
+ 374 55 00 21 62
http://www.conservatory.am,
E-mail: yerazhisht@gmail.com
https://www.facebook.com/Yerazhisht-newspaper-Yerevan-State-Conservatory-996490150508214/

